02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

8 (1407) • 1 մարտի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ոստիկանության պետն ընդունեց քաղաքացիների

Փետրվարի 27-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը հերթական անգամ հանդիպեց քաղաքացիների հետ:

Բարձրացրած հարցերը ինչպես ոստիկանության, այնպես էլ այլ գերատեսչությունների իրավասության շրջանակում էին:

Բողոքները հիմնականում կապված էին ոստիկանության որոշ ծառայողների գործողությունների կամ անգործունեության հետ, դժգոհություններ հնչեցին նաեւ նախկինում տեղի ունեցած ու չբացահայտված որոշ հանցագործությունների եւ այլ խնդիրների վերաբերյալ:

Վալերիյ Օսիպյանը հանձնարարեց որոշ հարցերի լուծումներ գտնել տեղում, մյուս դեպքերում քաղաքացիներին առաջարկվեց դիմել գրավոր: Այն խնդիրների առնչությամբ, որոնք ոստիկանության իրավասությունից դուրս էին, քաղաքացիներին ուղղորդվեց համապատասխան կառույցներ դիմել:

Տեղում ուսումնասիրվեցին նաեւ ոստիկանության պետին հասցեագրված դիմումները, որոնց վերաբերյալ եւս նա կոնկրետ հանձնարարականներ տվեց:

Համագործակցությունն ամրապնդվում է

Փետրվարի 25-ից 26-ը երկօրյա աշխատանքային այցով Հայաստանում էր Իրանի Իսլամական Հանրապետության ներքին գործերի նախարարության անվտանգության հարցերի գլխավոր վարչության պետ Հոսեյն Քալանթարիի գլխավորած պատվիրակությունը:

Փետրվարի 26-ին պատվիրակությանն ընդունեց ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանը: Նա կարեւորեց երկու պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունները, ինչի շնորհիվ է նաեւ, որ սերտ համագործակցություն կա Հայաստանի եւ Իրանի իրավապահների միջեւ:



Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Հոսեյն Քալանթարին ամփոփեց երկօրյա աշխատանքային այցի արդյունքները:

Քննարկվեցին նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Մինչ այդ՝ փետրվարի 25-ին, պատվիրակությանն ընդունեց ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանը: Նա կարեւորեց երկու երկրների բարեկամական կապը, ինչի շնորհիվ տարբեր ոլորտներում, այդ թվում՝ իրավապահ կառույցների միջեւ ստեղծվել է սերտ համագործակցություն, որն ուղղված է Հայաստանի եւ Իրանի պետական անվտանգությանն ու քաղաքացիների ապահովությանը:

Հոսեյն Քալանթարին, բարձր գնահատելով երկու երկրների բարեկամական հարաբերությունները, նշեց, որ իրանցիների համար զբոսաշրջության նախընտրելի երկրներից է Հայաստանը: Նա գոհունակություն հայտնեց իրենց երկրի քաղաքացիների անվտանգության ապահովման գործում ՀՀ ոստիկանության ցուցաբերած ծառայության համար:

Քննարկվեցին մի շարք հանցատեսակների դեմ պայքարի ուղղությամբ համագործակցության ընդլայնման հնարավորությունները, երկու երկրների ճանապարհային ոստիկանությունների, սահմանամերձ հատվածներում ոստիկանության ստորաբաժանումների, Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոների ծառայությանը վերաբերող հարցեր:

էջ 2

Ոստիկանները վնասազերծեցին ավազակին

Փետրվարի 27-ի առավոտյան Արթիկ քաղաքի Աբովյան փողոցում ոստիկանության պարեկապահակտային ծառայողները շրջայցի ժամանակ ոսկերչական խանութի դիմաց նկատեցին դանակը ձեռքին դիմակավոր տղամարդու. ավազակային հարձակում էր կատարվում: Դիմակավորն արդեն վնասել էր խանութի տիրոջ ձեռքը, չէր բացառվում՝ նույն կերպ վարվեր եւ ոստիկանների հետ, որոնցից մեկը կին էր: Ոստիկանները գործեցին արագ ու պրոֆեսիոնալ: Զեռնամարտի հնարքների կիրառմամբ կասկածյալին վնասազերծելուց հետո ահազանգեցին ոստիկանության Արթիկի բաժին: Զուշացավ նաեւ օպերատիվ խումբը:

Ավազակային հարձակում կատարած անձը բերման ենթարկվեց ոստիկանության Արթիկի բաժին, որտեղ պարզվեց նրա ինքնությունը՝ Սարափակ գյուղի բնակիչ Համազասպ Մնացյան:

Հարուցվել է քրեական գործ:

Չարաշահել էր պաշտոնեական դիրքը

Իրացնելով ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկությունները՝ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր եւ Շիրակի մարզային վարչությունների ու Աշոցքի բաժնի ծառայողները ձեռնարկված միջոցառումներով պարզել են, որ Շիրակի մարզի Զորաշեն գյուղի դպրոցի տնօրենը թույլ է տվել ապօրինություններ:

Մասնավորապես, օգտագործելով պաշտոնեական դիրքը՝ 2010-2018 թթ. հավաքարար է ձեւակերպել մի քաղաքացու, 2015-2017 թթ. տնտեսվար է ձեւակերպել որդուն, 2010-2018 թթ. պահակ է ձեւակերպել մի քաղաքացու, մեկ այլ անձի էլ պահակ է հրամանագրել 2013 թ. փետրվարից սեպտեմբեր ամիսը: Նրանք իրականում աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձը՝ շուրջ 16 միլիոն դրամ, յուրացվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Սպանության փորձ Դիլիջանում

Փետրվարի 20-ին ոստիկանության Դիլիջանի բաժնում ահազանգ ստացվեց, որ «Դիլիջան» ազգային պարկի վարչական շենք փանող ճանապարհին կրակոցներ են հնչել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ-քննչական խմբերը պարզեցին, որ անհայտ անձը ինքնաձիգով կրակահերթ է արձակել Թեղուտ գյուղի մի բնակչի մեքենայի ուղղությամբ: Վարորդը չէր տուժել: Կրակոցների հետեւանքով վնասվել էր մեքենան: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին 32 կրակված պարկուճ եւ ինքնաձիգի պահունակ:

Ոստիկանության մի շարք ստորաբաժանումների ծառայողների համատեղ միջոցառումների արդյունքում օպերատիվ տվյալներ ստացվեցին հանցագործությունը կազմակերպած եւ կատարած անձանց ինքնության վերաբերյալ: Պարզվեց, որ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձինք դեպքից հետո մեկնել էին մայրաքաղաք:

Փետրվարի 21-ին դիլիջանցի երեք տղամարդկանց ոստիկանները հայտնաբերեցին մայրաքաղաքում եւ բերման ենթարկեցին ոստիկանության Դիլիջանի բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ կատարվածի հանգամանքները եւ դեպքի հետ առնչություն ունեցող բոլոր անձանց դերակատարումը պարզելու ուղղությամբ:

Հայտնաբերվեց երեք տարի անց

Երկրորդ հարկից անկոչ հյուրի կատարած ցատկն այնքան էլ «փափուկ» չէր ստացվել:

էջ 2

Առանց վաղեմության ժամկետի

Դրացանով ու ատրճանակով զինված ու դիմակավորված՝ խուժեցին ու պահանջեցին փողերը:

էջ 3

«Վիուկների որս» Գերմանիայում

Դատապարտյալների մեջ կային յոթ-ութ տարեկան աղջիկներ, որոնցից քսաներկուսը խարույկ էին բարձրացվել:

էջ 5

Համագործակցությունն ամրապնդվում է

Սկիզբը՝ էջ 1

Փետրվարի 25-ին պատվիրակությանն ընդունեց ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետ Արսեն Այվազյանը: Նա ներկայացրեց երկու երկրների միջեւ համագործակցության դրական արդյունքները, ինչպես եւ որոշ խնդիրներ: Հայաստանի եւ Իրանի իրավապահները ակտիվ համագործակցում են թմրամիջոցների անօրինական շրջանառության, թրաֆիքինգի, փողերի լվացման եւ այլ հանցատեսակների դեմ պայքարում:

Քննարկվեցին իրավապահ երկու կառույցների միջեւ տեղեկատվության արագ տրամադրման եւ փորձի փոխանակման վերաբերյալ հարցեր: Կողմերը միակարծիք էին, որ ժամանակի պահանջներին համահունչ՝ անհրաժեշտ է ամրապնդել համագործակցությունը, ներառել նոր ուղղություններ, քանի որ հանցատեսակները նույնպես զարգանում են՝ ներթափանցելով տարբեր ոլորտներ:

Նույն օրը Իրանի Իսլամական Հանրապետության անվտանգության եւ ոստիկանության պատվիրակությունը եղավ նաեւ ոստիկանության կրթահամալիրում: Կրթահամալիրի պետ Մուշեղ Բաբայանը հյուրերին ներկայացրեց կրթահամալիրի կառուցվածքն ու գործունեության մանրամասները:

ԻԻՀ ներքին գործերի նախարարության անվտանգության հարցերի գլխավոր վարչության պետ Հոսեյն Քալանթարին հույս հայտնեց, որ համագործակցություն կձեւավորվի նաեւ երկու բարեկամ երկրների իրավապահ կառույցների ուսումնական հաստատությունների միջեւ:

Քննարկվեցին իրավապահների մասնագիտական կրթությանը վերաբերող մի շարք հարցեր:

Աշխատանքային այցի ավարտին ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանն ու Հոսեյն Քալանթարին ստորագրեցին Իրանի Իսլամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ անվտանգության համատեղ աշխատանքային խմբի երկրորդ նիստի արձանագրությունը:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գողության փորձ եւ՝ ոչ միայն

Փետրվարի 19-ին ոստիկանություն ահազանգած կինը հայտնում էր, որ տանը մենակ է, եւ ինչ-որ մեկը փորձում է դուռը բացել: Բնակարանը Էջմիածին քաղաքի Ծահուման փողոցի շենքերից մեկում էր: Ահազանգը ստանալուն պես մի քանի օպերատիվ խումբ նշված հասցե մեկնեց:

Տանտիկինը հասկանալով, որ դուռը բացողը ամուսինը չէ, ահազանգել էր ոստիկանություն: Աղմկել էր, դուռը բացել փորձողն էլ՝ փախել:

Ահազանգին արագ արձագանքած ոստիկանները թաղամասում օպերատիվ-հետախուզական ու որոնողական միջոցառումներ ձեռնարկեցին: Ահազանգից մեկ ժամ չանցած՝ ոստիկանները երկու տղամարդու կասկածանքով բերման ենթարկեցին բաժին:

Վանաձորի բնակիչ Էդուարդ Խաչատյանի խուզարկությամբ հայտնաբերվեցին հարմարեցված բանալիներ: Խուզարկվեց նաեւ մյուս բերման ենթարկվածը: Վանաձորցի Սամվել Խաչատյանի մոտ հայտնաբերվեց մի զույգ ձեռնոց:

Ի դեպ, Սամվել Խաչատյանը մեղադրվում էր բնակարանային գողության համար: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործը նախաքննության փուլում է: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նրա նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոխարինվել էր 700 հազար դրամ գրավով, եւ նա ազատ էր արձակվել:

Այս դեպքով ոստիկանության Վաղարշապատի բաժնում հարուցված քրեական գործը փոխանցվել է տարածքային նախաքննական մարմնին:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտնաբերվեց երեք տարի անց

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ներթապահ մասի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ փետրվարի 20-ին Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան ժամանեց մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչ Արման Ստեփանյանը: 32-ամյա երիտասարդը 2016 թվականից հետախուզման մեջ էր ոստիկանության Նոր Նորքի բաժնի կողմից, մեղադրանքը՝ գողություն:

2016 թ. հոկտեմբերի 24-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին դիմած քաղաքացին հայտնում էր, որ տնից դուրս գալիս բանալին թողել էր դռան առաջ փռած շորի տակ, իսկ երբ քսան-երեսուն րոպե անց վերադարձել էր, բանալին արդեն տեղում չէր: Սեփական բնակարան մտել էր փականը կոտրելով եւ ապշել էր տեսածից՝ ամեն ինչ տակնուվրա էր արված: Բնակարանից գողություն էր կատարվել:

Դեպքի վայր մեկնած ոստիկանները, տանտիրոջ պատմածը վերլուծելով, եկան եզրահանգման, որ նրա տուն գալու պահին բնակարանագողը դեռեւս ներսում էր եղել, իսկ բնակարանը լքելու միակ ճանապարհը պատշգամբն էր: Ոստիկանների վարկածի վկայությունն էին նաեւ շքամուտքի արյան հետքերը. երկրորդ հարկից անկոչ հյուրի կատարած ցատկն այնքան էլ «փափուկ» չէր ստացվել:

Օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումներ իրականացվեցին, առաջ քաշվեցին տարբեր վարկածներ: Միաժամանակ՝ հարցումներ արվեցին բուժհաստատություններ: Ոչ մի արդյունք:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների շնորհիվ շուտով կասկածյալը հայտնվեց քրեական հետախույզների տեսադաշտում, բայց մինչ ոստիկանների կասկածները կհիմնավորվեին, նա ապօրինի հատեց սահմանը եւ Վրաստանի տարածքով մեկնեց Ռուսաստանի Դաշնություն: Նրա նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Հարուցված քրեական գործը կասեցվեց:

Նախկինում գողության համար երկու անգամ դատապարտված Արման Ստեփանյանը պատահական ընտրված շենքերի շքամուտքերում այդ օրը «ստուգման էր ենթարկել» դռների առաջ փռած շորերը. ըստ նրա՝ հավանականությունը մեծ էր, որ մեկնումեկի տակ կարող է գտնել բաղձալի բանալին:

Իրոք, բախտը ժպտացել էր: Դուռը բանալուց հետո փնտրել-գտել էր աղամանդե քարերով մատանի եւ քսանհինգ հազար դրամ: Բայց անսպասելի տուն էր մտել տանտիրուհին, եւ Արմանը ստիպված դուրս էր ցատկել պատուհանից...

Անհաջող վայրէջքի հետեւանքով ստացած վնասվածքները ծանր չէին: Տնային եղանակով ինքնաբուժվել էր, իսկ երկու օր անց կարողացել էր ապօրինի հատել պետական սահմանը:

Երեք տարի անց, սակայն, ստիպված էր վերադառնալ: Ոստիկանության Մալաթիայի բաժնում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել նրա գտնվելու վայրի վերաբերյալ: Հարազատների շրջանում տարված բացատրական աշխատանքներն արդյունավետ էին:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Վարկային միջնորդը»

Սոցիալական կայքերում հաճախ են հանդիպում հայտարարություններ, երբ, այսպես կոչված՝ վարկային միջնորդները կամ բանկային օգնություն տրամադրողներն առաջարկում են վարկառուին հանել «սեւ ցուցակներից» կամ կարճ ժամկետում տրամադրել խոշոր չափի վարկ: Լինում են դեպքեր, երբ քաղաքացիները փորձում են օգտվել նրանց ծառայությունից եւ խարդախության զոհ են դառնում:

Նման մի դեպք արձանագրվեց փետրվարի 15-ին:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգած քաղաքացին հայտնում էր, որ վարկային կազմակերպության աշխատակից ներկայացած ոմն Նարեկ, իր վարկային պատմությունը մաքրելու եւ «սեւ ցուցակից» հանելու պատրվակով, պահանջել է 200 հազար դրամ, սակայն փողը ստանալուց հետո որեւէ քայլ չի ձեռնարկել:

Նման մի դեպք էլ գրանցվեց փետրվարի 18-ին: Ոստիկանության Կենտրոնական բաժին զանգած քաղաքացին հայտնում էր, որ վարկ վերցնելուն միջնորդելու նպատակով ոմն Նարեկ իրենից պահանջել ու ստացել է 180 հազար դրամ: Այս դեպքում եւս վերջաբանը նույնն էր:

Կենտրոնականի քրեական հետախույզները միջոցառումներ ձեռնարկեցին Նարեկի ինքնությունը պարզելու ուղղությամբ: Շուտով ստացվեցին օպերատիվ տեղեկություններ, որոնց հիման վրա ծավալված գործողությունների արդյունքում պարզվեց, որ վարկային կազմակերպության աշխատակից ներկայացած Նարեկը Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղի բնակիչ, 32-ամյա Պողոս Գրեյանն է:

Նա հայտնաբերվեց եւ, խարդախություններ կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին:

Ոստիկանները պարզել են, որ Պողոս Գրեյանը հայտարարություններ է տարածել սոցիալական կայքերի միջոցով: Միջնորդությունից օգտվել ցանկացողներն իրենք էին կապվել նրա հետ, նա էլ չարաշահել էր դիմողների վստահությունն ու տիրացել գումարներին:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Դանակահարությունը բացահայտվեց

Փետրվարի լույս 19-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ ստացվեց: Հայտնում էին, որ կրծքավանդակի կտրած-ծակած թափանցող վերքով «շտապօգնության» խումբը բուժօգնության է տեղափոխել 34-ամյա տղամարդու: Տուժածը հայտնել էր, որ կայարանում վիճաբանություն է եղել:

Հիվանդանոց մեկնած օպերատիվ խմբի ծառայողները պարզեցին, թե որտեղից էր տուժածը տեղափոխվել բուժհաստատություն: Էրեբունու ոստիկանները մեկնեցին մայրաքաղաքի Միչուրինի փողոց: Պարզվեց, որ տուժողը, տանտերն ու եւս մի քանի հոգի միասին կերուխում էին արել, որն ավարտվել էր դանակահարությամբ:

Էրեբունու ոստիկանության քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝ դանակահարած անձի ինքնությունը պարզվեց: Կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում դանակով տղամարդուն հարվածել, ապա փախուստի էր դիմել 20-ամյա Արշավիր Դավթյանը: Նա հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Էրեբունու բաժին ու ձերբակալվեց:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Առանց վաղեմության ժամկետի

Ռուսաստանի Դաշնության գործընկերների հետ արդյունավետ համագործակցության հերթական վկայությունը չուշացավ. Մոսկվա քաղաքում հայտնաբերվեց եւ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի ուղեկցությամբ Դաշյաստան տեղափոխվեց առանձնապես ծանր հանցագործությունների մեղադրանքով 2013 թվականից հետախուզման մեջ գտնվող Ալեքսան Հայրապետյանը: Հանցակիցների մասով քրեական գործը տրամաբանական ավարտին էր հասել 2013-ի հունվարին: Ալեքսան Հայրապետյանի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով՝ քրեական գործից նրա մասն անջատվել եւ կասեցվել էր:

2012 թ. հունվարին ստեղծվել էր հանցախումբ՝ մայրաքաղաքի տարադրամի փոխանակման կետերի եւ աշխատողների վրա հարձակվելու նպատակով: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական ծավալուն գործողությունների արդյունքում հանցախումբը վնասազերծվեց. խմբի չորս անդամները հայտնաբերվեցին եւ ենթարկվեցին քրեական պատասխանատվության: Ալեքսան Հայրապետյանը հասցրեց լքել հանրապետությունը:

Հանցախումբը երեք ավազակային հարձակում էր կատարել, որոնցից մեկը զուգակցվել էր դիտավորությամբ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելով: Ավազակները չէին կանխատեսել, որ մեկ տարի անց կբացահայտվեն եւ գործունեության մեծ ծրագիր էին կազմել: Հանցագործությունների տրամաբանական ավարտը կանխատեսում էին ոստիկանները, որոնց հետեւողական գործողությունները քայլ առ քայլ տեսանելի դարձրին հանցախմբի անդամներից յուրաքանչյուրին, իսկ հետո հանցագործությունները բացահայտվեցին, հանցախումբը վնասազերծվեց: Շարունակվեցին միջոցառումները՝ հետախուզման մեջ գտնվող Ալեքսան Հայրապետյանին հայտնաբերելու ուղղությամբ:

Հանցախումբը ձեւավորել էր Ռաֆայել Հակոբյանը: Սկզբում կարծում էր, որ ավազակությունը կարող են երկու հոգով գլուխ բերել, ուստի կալանավայրային ընկերոջ՝ Տիգրան Հովակիմյանի համաձայնությունը ստանալուց հետո անցավ նախապատրաստական աշխատանքներին: Նախ զենք ձեռք բերեց. երկու հարյուր հազար դրամով որսորդական ողորկափող հրացան գնեց, ապա մի վերջին անգամ քննարկել-վերլուծելուց հետո, 2012 թ. մարտի 23-ին Տիգրանի հետ «ՎԱԶ-2121» մակնիշի մեքենայով գնացին Վարդանանց փողոց ու դարանակալեցին թիրախ ընտրած տարադրամի փոխանակման կետի մոտ: Հետեւեցին աշխատակցի անցուդարձին: Վերջապես նա աշխատանքն ավարտեց ու փողով լի մարգաճամպրուկով ուղղվեց դեպի իր «Մերսեդես»-ը: Տեղն ու պահը հարմար չէին, ուստի զույգը «Նիվա»-ով հետեւեց «Մերսեդես»-ին: Իրենց շենքի մուտքի մոտ կայանելով մեքենան՝ փոխանակման կետի տերը, ճամպրուկը ձեռքին, իջավ մեքենայից ու մտավ շքամուտք: Նույն պահին, հրացանը ձեռքին, «Նիվա»-ից իջավ նաեւ Ռաֆայել Հակոբյանն ու մտավ շքամուտք: Ըստ պլանի՝ Տիգրան Հովակիմյանը սպասելու էր մեքենայի մեջ՝ գործի ավարտից հետո արագ հեռանալուն պատրաստ: Ռաֆայել Հակոբյանը հրացանը պահելով զոհի վրա՝ պահանջեց փողերը: Չէր սպասում, որ նա դիմադրություն ցույց կտա: Կրակեց ոտքին: Մարմնական վնասվածքներ ստացածը դարձյալ տեղի չտվեց. դիմադրությունից անակնկալի եկած ու նաեւ վախենալով բռնվելուց՝ Ռաֆայել Հակոբյանը փախավ: Նստեց իրեն սպասող մեքենան, ու փախան...

Ձախողումը դառը դաս եղավ. համալրում էր պետք, երկուսով քիչ էին նման ծավալի գործի համար:

Հանցախումբը համալրեցին Հայկ Սարգսյանն ու Ալեքսան Հայրապետյանը: Մեծ փողի հոտ էր փչում, չմերժեցին ընկերոջ՝ Ռաֆայելի առաջարկը:

Չորսով երկու գործ գլուխ բերեցին, որոնցից մեկը՝ 2013 թվականի հունվարի 10-ին էր: Ե՛վ թիրախն էր ընտրված, ե՛ւ զենքով էին համալրվել: Տարադրամի փոխանակման կետը Բագրատունյաց պողոտայում էր: Ռաֆայելը ելումուտն ուսումնասիրեց ու կեսգիշերին խմբին «մարտի» տարավ: Ինքը մնաց մեքենայի մեջ, որ հարկ եղած դեպքում նրանց արագ հեռացնի դեպքի վայրից:

Տարադրամի փոխանակման կետում միայն աշխատակիցն էր՝ սեփականատիրոջ եղբայրը: Հրացանով ու ատրճանակով զինված ու դիմակավորված՝ խուժեցին ու պահանջեցին փողերը: Աշխատակիցը չհասցրեց կողմնորոշվել, երբ հնչեց կրակոցը: Ատրճանակով զինվածը Ալեքսան Հայրապետյանն էր. ոտքին հասցված վնասվածքից տարադրամի աշխատակիցն ընկավ, իսկ ավազակները, հափշտակելով փոխանակման կետում եղած փողերը, փախուստի դիմեցին:

Ձեռնարկված օպերատիվ հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում օրեր անց հանցագործությունը բացահայտվեց: Հանցախմբի անդամներից երեքը հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին: Նյութեր նախապատրաստվեցին, հետո՝ նախաքննություն, դատաքննություն...

Մեկ վարույթում միացված քրեական գործով որպես մեղադրյալ էր անցնում նաեւ Էմմա Ալոյանը՝ Ռաֆայել Հակոբյանի կինը: Նրան առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 181 (հափշտակություն, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ) եւ 214 (առեւտրային եւ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը) հոդվածների հատկանիշով էր:

Լինելով բանկի առաջատար մասնագետ եւ հասանելիություն ունենալով բանկի ավանդատուների ցանկին, նա իր ծառայողական համակարգչով բացել էր պայմանագրերի էլեկտրոնային տարբերակներ եւ ամուսնու ու նրա ընկերների անուններով բացել հաշվեհամարներ, ավանդային պայմանագրեր կնքել եւ գոյություն չունեցող ավանդային պայմանագրերի գումարները նստել էին «ավանդատուների» հաշվեհամարներին:

Հանցագործությունները բացահայտվեցին, հանցախումբը վնասազերծվեց:

Տեւական ժամանակ չբռնվելը անպատիժ մնալ չէր նշանակում: Յոթ տարի անց հայտնաբերվեց նաեւ խմբի փախստական անդամն ու ներկայացվեց նախաքննական մարմնին:

Քրեական գործից անջատված մասով վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողություն կայանից

Փետրվարի 8-ին մի թոշակառու ոստիկանությունում հաղորդում էր տվել, որ փետրվարի 1-ից 8-ն ընկած ժամանակահատվածում Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի Հին սովխոզ կոչվող տարածքում տեղակայված ջրի պոմպակայանի մուտքի դռան փականի օղակը անհայտ եղանակով վնասելու եւ բացելու միջոցով գողացել են էլեկտրական շարժիչ՝ պատճառելով գույքային վնաս:

Դեպքի առթիվ փետրվարի 8-ին քրեական օրենսգրքի 177 հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանության Հրազդանի բաժնում ստացվեցին տեղեկություններ, որ նշված հանցագործությունը կատարել են Վարդան Մ.-ն եւ Արթուր Ն.-ն:

Նրանք փետրվարի 11-ին հայտնաբերվեցին եւ տվեցին խոստովանական ցուցմունքներ: Գողոնը մասամբ հայտնաբերվել է:

Քննությունը շարունակվում է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Բացահայտվեց 27 տարի անց



1992 թ. ապրիլին Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում անձնական ունեցվածքի գողություն էր կատարվել: Տրակտոր էին գողացել: Թումանյանի շրջանի ներքին գործերի բաժնում քրեական գործ էր հարուցվել: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել էր, որ գողացված տրակտորը դեպքից օրեր անց վաճառվել էր Լորուտ գյուղի մի բնակչի: Հետագա միջոցառումներով պարզվել էր, որ տրակտորը վաճառած անձը գողացողը չէ, բայց տեղյակ է եղել, որ այն գողացված է:

Դեպքից 27 տարի անց իրավապահները բավարար ապացույցներ ձեռք բերելով՝ հիմնավորել են դեպքի մի շարք հանգամանքներ՝ բացահայտելով գողությունը:

Պարզվել է, որ տրակտորը գողացել է Տավուշի մարզի Արճիշ գյուղի մի բնակիչ, որը տարիներ առաջ մահացել է:

Իրավական առումով, նաեւ այս դեպքում գործում է վաղեմության ժամկետի սկզբունքը, սակայն ցանկացած հանցագործության բացահայտում, անկախ վաղեմությունից ու ժամկետներից, կարեւոր է ե՛ւ արարքի ամբողջական գնահատման, ե՛ւ պատժի՝ թեկուզեւ բարոյական պատժի, անխուսափելիության տեսանկյունից:

Գողություններ տերմինալներից

Բացահայտվեցին Կենտրոն վարչական շրջանում տեղադրված մի քանի տերմինալից կատարված գողության դեպքեր:

Գիշերային շրջիկ ծառայության ընթացքում պարեկապահակետային ծառայության գնդի 1-ին գումարտակի ոստիկաններ Գեւորգ Հայրապետյանն ու Գեւորգ Կոստիկյանը Սարյան-Ամիրյան փողոցների խաչմերուկում մի տղամարդու էին նկատել, որը կասկածելի վարքագիծ էր դրսեւորել: Պարեկայինները մոտեցել էին որոշ ճշտումներ անելու, եւ նրանց կասկածները հաստատվել էին: Հովհաննես Բաղալյանը բերման էր ենթարկվել ոստիկանության Կենտրոնական բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց մետաղական իր կամ, ինչպես ընդունված է ասել՝ տեխնիկական միջոց:

Հովհաննես Բաղալյանը մատնացույց արեց այն վճարային տերմինալները, որոնցից մետաղադրամներ էր հափշտակել: Նրա թիրախում հայտնված տերմինալները 10-ից ավելի են: Դեպքերը տեղի են ունեցել փետրվարի 9-ից 17-ը:

Քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է տարածքային նախաքննական մարմնին:

Բռնվեց փախուստի պահին

Փետրվարի լույս 13-ի գիշերը Արարատի մարզի Նաղափ գյուղում գողություն էր կատարվել: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին խանութի դուռն ու գողացել ծխախոտ, խմիչք, տնտեսական իրեր ու հեռուստացույց: Նախնական հաշվարկով՝ տիրոջը պատճառվել էր մեկ միլիոն դրամի վնաս:

Ոստիկանության Արարատի բաժնից օպերատիվ խումբ մեկնեց դեպքի վայր: Տեղեկությունը փոխանցվեց նաեւ գյուղերում գիշերային շրջիկ ծառայություն իրականացնող պարեկախմբերին:

Արարատի մարզի Նոր ուղի գյուղում շրջագայող պարեկախմբի տեսադաշտում առանց համարանիշի «Մերսեդես» հայտնվեց: Վարորդը, ոստիկաններին տեսնելով, մեքենայով փախուստի դիմեց: Ոստիկանները հետապնդեցին ու հարկադրաբար կանգնեցրին մեքենան, ապա տեղափոխեցին բաժնի հատուկ պահպանվող տարածք: «Մերսեդես»-ի վարորդ Տիգրան Մանուկյանը, գողության կասկածանքով, բերման ենթարկվեց:

Վայոց ձորի մարզի Արենի գյուղում ապրող Մանուկյանը հայտնեց, որ Նաղափ գյուղի խանութը ինքն է թալանել: Հետագա միջոցառումներով Արարատի ոստիկանները գողոնի մի մասը հայտնաբերեցին Նոր ուղի գյուղով անցնող ջրանցքի հարեւանությամբ, մի մասն էլ Տիգրան Մանուկյանը «Մերսեդես»-ի սրահից դուրս էր նետել, երբ ոստիկանները հետապնդել էին: Այդ իրերը եւս հայտնաբերվել եւ առգրավվել են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Չիարուցված գործեր

Հունվարի 21-ին, գողության կասկածանքով, Գուրգեն Մարտիրոսյանը բերման էր ենթարկվել ոստիկանության Ավանի բաժանմունք: Նյութերի նախապատրաստման ընթացքում նա մանրամասնեց կատարածը:

2018-ի դեկտեմբերի 22-ին մտնելով սուպերմարկետ՝ մոտեցել էր ոգելից խմիչքների փաղավարին, եւ, հարմար պահն օգտագործելով, գողացել 31 հազար դրամ արժողությամբ վիսկի: Գողոնը խմել ու իրեն գերազանց էր զգացել:

Մեկ ամիս անց, երբ վիսկիի ազդեցությունը հիշողություն էր դարձել, դեպքի մասին հիշեցրին ոստիկանները:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի աշխատակիցները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, հունվարի 29-ին, գողություն կատարելու կասկածանքով, բերման էին ենթարկել Վահրամ Խաչատրյանին: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվել էր կանացի դրամապանակ, որի մեջ այցեքարտեր եւ պարացեփամոլի դեղահաբ կար:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վահրամը մանրամասնեց, թե ինչպես է ուրիշի դրամապանակը հայտնվել իր գրպանում: Երեկոյան Աբովյան փողոցում ավտոբուս էր նստել, որ գնար Նոր Նորք: Ավտոբուսում նկատել էր հարեւանությամբ կանգնած ուղեւորուհու պայուսակը եւ որոշել էր դրամապանակը գողանալ: Աննկատ բացել էր պայուսակի շղթան ու դրամապանակը հանելով՝ բաճկոնի գրպանը դրել, իսկ հաջորդ կանգառում իջել էր ավտոբուսից:

Տուժողը հրավիրվեց ոստիկանություն՝ գրպանահատի հետ առերեսման: Այդ դեպքով եւս քրեական գործի հարուցումը մերժվել է՝ դիմողի բողոքի բացակայությամբ:

Վեճի թեմա

Գեղարքունիքի մարզի Վերին Նորժա գյուղի բնակիչ Արսեն Կարապետյանը ծանոթի՝ Մանվել Սիմոնյանի մեքենայով ուղեւորվեց Նորակերտ: Այրք գյուղում մեքենան խրվեց ձյան մեջ: Մանվելը, որքան էլ ջանաց, չկարողացավ մեքենան հանել: Արսենը փորձեց հրել, բայց՝ ապարդյուն:

Նրանց օգնության հասան Այրք գյուղի բնակիչներ հայր, որդի եւ թոռ Սահակյանները եւ համագյուղացի Ավետիքը: Սահակյան Դայկը տեսնելով Արսենին՝ հիշեց 8 հազար դրամ պարտքը: Դարցրեց, թե երբ է փողը վերադարձնելու: Ու մինչ նրանք պարտք ու պահանջի շուրջ խոսում էին, Դայկի հայրը՝ Մարատը, լսելով նրանց խոսակցությունը՝ ասաց.

- Դրա ժամանակը չի, մեքենան դուրս բերեք, նոր խոսեք:

Բայց նրանց խոսակցությունն արդեն վեճի էր վերածվել: Դայկի որդին՝ Մանվելը, եւս խառնվեց վեճին: Արսենը պարտատիրոջը փորձում էր հասկացնել, որ առաջին իսկ հնարավորության դեպքում պարտքը կփակի, բայց Դայկը պարտապանին ընդառաջելու ցանկություն չունենալով՝ բռունցքով խփեց նրա դեմքին: Դորից հետ չմնաց նաեւ Մանվելը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Նշանակվեց նաեւ դատաբժշկական փորձաքննություն:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ինչ է պետք երջանիկ լինելու համար

Երջանիկ լինելու համար կարեւոր է, որ մարդը հասկանա եւ գիտակցի իր կոչումն ու նշանակությունը կյանքում: Ամեն մարդ յուրահատուկ եւ անկրկնելի է: Եվ ձեր առաջին քայլը դեպի հաջողություն այդ փաստի գիտակցումը պիտի լինի:

Հաջողության նախադրյալներին կարելի է հավելել նաեւ դժվարությունները հաղթահարելու ձգտումը: Ձեռքբերումների մղումը մարդուն ուրախություն է պարգեւում:

Ալեքսանդր Մակեդոնացին ցանկանում էր նվաճել աշխարհը, Ճլիմանը՝ հայտնաբերել Տրոյան, Մագելանը՝ պտտվել երկրագնդի շուրջը: Եվ հասան իրենց նպատակին: Սակայն բնավ պարտադիր չէ, որ մեր նպատակներն այդքան համընդգրկուն լինեն: Չնայած, պատմությունը վկայում է՝ որքան մեծ խնդիր է իրեն առաջադրում մարդը, այնքան մեծ հաջողությունների է հասնում կյանքում: Պետք չէ վախենալ նպատակի մեծությունից, մանավանդ, որ նպատակները ոչ թե մեր բանականությամբ են սահմանվում, այլ ծնվում են ենթագիտակցության խորքերում: Իրականում գիտակցությունը միայն օգնում է հասնել նրան, ինչն արդեն առաջադրվել է անգիտակցականի կողմից: Մեծ խնդիրներ ու նպատակներ առաջադրելով՝ անհրաժեշտ է դուրս գալ սովորական, շարքային պատկերացումների շրջանակներից: Հիշե՛ք, որ հնարավորությունները եւ ունակությունները հարյուրավոր անգամներ գերազանցում են դրանց մասին պատկերացումներին:

Կարիերայի ընտրության դեպքում նախ հարկ է որոշել՝ ինչով կուզեիք զբաղվել, գործունեության որ տեսակն է ձեզ առավել մեծ հաճույք պատճառում: Ճիշտ ընտրությունն այդ դեպքում ուժեղ հոգեբանական լիցքեր կապահովի, ինչը կտասնապատկի ձեր ուժերը: Բնախոսները դա կոչում են «դոմինանտ», հոգեբանները՝ «հուզական դրդապատճառ», արեւելյան միստիկները՝ «կի էներգիա» կամ «ցիգուն»: Բանն այն է, որ իսկապես հաջողակ կարող է լինել այն գործը, ինչով սիրով ես զբաղվում:

Պետք է գնահատել սեփական կարողություններն ու նախադրյալները: Այդ ունակությունները կարող են ամենատարբեր բնագավառների վերաբերել, սակայն դրանք չհայտնաբերելու եւ չգնահատելու դեպքում դատապարտված կլինեք տխուր արդյունքների: Նման հեռանկարից խուսափելու համար անհրաժեշտ է կոնկրետացնել ու մանրամասնել ձեր ունակությունները, հայտնաբերել ձեր ուժեղ ու թույլ կողմերը, գտնել առավել ընդգծվածները կատարելագործելու ուղիներ:

Մեր ենթագիտակցությունը խորամանկ ու ծույլ է, չի սիրում շտապել, շարունակ աշխատանքը հետաձգելու պատրվակ է փնտրում, ուստի նրա հետ «պայմանագիր կնքելիս» միշտ կոնկրետացրեք աշխատանքի կատարման հստակ ժամկետները: Չնայած դրան՝ Հանս Սելյեն խորհուրդ է տալիս. «Եթե չեք ցանկանում ի սկզբանե դատապարտված լինել տապալման եւ ձեր նախաձեռնությունների ձախողման, պետք չէ չափազանց բարձր նշան բռնել եւ անիրական խնդիրներ առաջադրել: Ոմանց համար դրանք մոտ են մարդկային հնարավորությունների առավելագույնին, ոմանց համար՝ նվազագույնին: Մեր բնածին ունակությունների շրջանակներում անհրաժեշտ է անել ամենը, ինչին ընդունակ ենք, ձգտել բարձր վարպետության»: Ձեր առաջ դրված խնդիրները հաղթահարելուց հետո հարց տվեք ձեզ՝ ընտրածս գործը հարկավո՞ր է մարդկանց, պահանջվա՞ծ է հասարակության կողմից: Եվ եթե հարցի պատասխանը, անկախ նրանից, թե ընտրած գործունեության տեսակը որ բնագավառին է վերաբերում, դրական լինի, խիզախորեն անցեք գործի, զուգակցեք վերը բերված բոլոր բաղադրիչները, եւ հաջողությունը կանխորոշված է:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

21 տարի անց

Ոստիկանությունում 40-ամյա կինը հաղորդում է տվել, որ 21 տարի ամուսնու հետ եղել են անհաշտ, նա հաճախակի ծեծել է իրեն: Այդ անգամ էլ կենցաղային հարցերի շուրջ ամուսինը վիճաբանել եւ ցանկացել է ծեծել, սակայն կնոջ համբերությունը հատել է, եւ նա դիմել է ոստիկանություն:

Դացընկերը

Վագոն-տնակում երկհոգիանոց հացկերույթի ժամանակ 18-ամյա Արթուրը գողացել է 30-ամյա Միշիկի բջջային հեռախոսը եւ 50 հազար դրամը:

Ճիշտ է, երեկոյան Արթուրը վերադարձրել է հեռախոսը, բայց փողը, որը նույնպես խոստացել էր վերադարձնել, չի տվել:

Միշիկը հրաժարվել է հաղորդում տալուց:

Խմած՝ կամրջին

Դավիթաշենի կամրջին ծառայություն իրականացնելիս ոստիկանները նկատել են մի տղամարդու, որը խփել-կոտրել է կամրջի ներքին հարկում գտնվող պահպանության պահակակետի պատուհանը:

Տղամարդը ներկայացվել է ոստիկանություն: Պարզվել է, որ 39-ամյա Մովսեսը գտնվում էր ավելի քան անսթափ վիճակում:

Վառված գողը

Հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ բուժօգնության է տեղափոխվել 37-ամյա Արմենը: Նա հայտնել է, թե բակում անվադող այրելիս գլխապտույտ է ունեցել եւ ընկել այրվող անիվի վրա:

Պարզվել է, որ Արմենը գողություն կատարելու նպատակով մտել է կիսակառույց շինություն, պտուտակահանով տեղահան անելով՝ դուրս է բերել մալուխներ, ապա մտել էլեկտրական ենթակայան՝ չիմանալով, որ այն լարման տակ է...

Ամուսնու պատասխանը

Հաղորդվել էր, որ Սասունը ծեծի է ենթարկել հարսին՝ Լիլիթին: Սա Լիլիթի՛ հայտնածն էր: Երկու օր անց հաղորդում է տվել Լիլիթի ամուսինը, այլ կերպ ասած՝ Սասունի որդին: Ըստ նրա՝ կինը կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ կացնով վնասել է տան դռան փականը, սողնակները եւ փայտե շրջանակը:

Կիսատ վերադարձ

Ոստիկանություն է զանգել 40-ամյա Հասմիկը եւ հայտնել, որ ծանոթ Արսենն իր պայուսակից գողացել է ոսկյա մատանի եւ 15 հազար դրամ:

Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ Արսենը երկու աղջիկների միջոցով վերադարձրել է մատանին, սակայն հրաժարվել է վերադարձնել փողը:

Պարզվել է Արսենի ինքնությունը, նա ներկայացել է ոստիկանություն, տվել խոստովանական բացատրություն ու բաց թողնվել:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ փետրվարի 21-ից 28-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 36 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 2-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ կողոպուտի փորձի, 4-ը՝ գողության, 1-ը՝ գողությանը հանցակցելու, 2-ը՝ խարդախության, 3-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ գրավառուին վնաս պատճառելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու,1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 79 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 117-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 24 դեպք. 2 մարդ զոհվել է, իսկ 26-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Փետրվարի 25-ին Երեւանի Սասնա Ծռեր փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-3110» եւ երկու «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներից մեկը շրջվել է. 21-ամյա վարորդն ու 18-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սարալանջի փողոցում վրաերթի է ենթարկել 49-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կոմիտասի պողոտայում վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «ԵրԱԶ» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Էջմիածին ճանապարհի 16-րդ կմ-ին կողաշրջվել է. 54-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Այգեշատ-Դաշտ գյուղամիջյան ճանապարհի 1-ին կմ-ին վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների եւ իր մեքենայով նրանց տեղափոխել հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «Միցուբիշի Պաջերո ԻՕ» մակնիշի ավտոմեքենան Մայիսյան կամուրջ-Նոյեմբերյան ճանապարհի 9-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ ընկել ջրատարը. վարորդը եւ 31-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 25-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Հալաբյան փողոցում վրաերթի է ենթարկել 56-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ գիտակցության չգալով՝ մահացել է:

■

Փետրվարի 26-ին Երեւան-Արմավիր ճանապահի 25-րդ կմ-ին իրար են բախվել «Ֆոլքսվագեն» մակնիշի եւ «ԿրԱԶ-250» բեռնատար ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի 43-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Երեւան-Արմավիր ճանապահի 16-րդ կմ-ին իրար են բախվել «Մերսեդես», «Տոյոտա» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 26-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Երեւանի Շինարարների փողոցում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 29-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Երեւանի Այվազովսկու փողոցում իրար են բախվել «Մերսեդես», «Օպել» եւ «Սիատ» մակնիշի ավտոմեքենաներ: «Սիատ»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Երեւանի Թբիլիսյան խճուղում իրար են բախվել «Տոյոտա» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ: Վարորդները մարմնական վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Չարենցավան-Ալափարս ճանապարհին իրար են բախվել «Օպել» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ: «ՎԱԶ-2106»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 26-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 114-րդ կմ-ին իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ: «ԲՄՎ»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

«Վիուկների որս» Գերմանիայում

16-17-րդ դարերում Եվրոպայում մոլեգնում էր ինկվիզիցիան: «Վիուկների որսի» ժամանակաշրջանն էր: Գերմանիայում այն սկսվեց ավելի ուշ, քան մյուս երկրներում, սակայն մահապատժի ենթարկված «վիուկների» քանակով Գերմանիան գերազանցեց բոլոր երկրներին: Ընդորում, «վիուկների որսը» տարածված էր գրեթե բոլոր մարզերում:

1590 թվականին, Էթինգենում մահապատժի ենթարկվեց 65 «վիուկ»: Բրաունշվեյգի մահապատիժների հրապարակում այնքան խարույկ էին վառել, որ հրապարակը համեմատում էին հրկիզված անտառի հետ: Կային օրեր, երբ միանգամից խարույկ էին բարձրանում տաստասներկու «վիուկ»:

Նեյս քաղաքում կառուցվել էր «վիուկներին» վառելու հատուկ վառարան: Տասը տարվա ընթացքում (1651-1661 թթ.) այս իշխանությունում կրակի բաժին է դարձել ավելի քան հազար մարդ, որոնց մեջ եղել են նաեւ երկուսից-չորս տարեկան երեխաներ:

Տրիրի եպիսկոպոսությունում 1587-1593 թվականներին վառել են 368 մարդու: Նմանատիպ մի «վիուկորսից» հետո երկու գյուղում փրկվել է ընդամենը մեկական մարդ:

Մահապատիժների «առատության» պատճառով Լեգամո քաղաքը համարվում էր «վիուկների որջ»:

Բասբերգի եպիսկոպոսությունում հինգ տարվա ընթացքում վառել էին 900 մարդու:

Դատավճիռներից մեկում, որը վերաբերում էր շուրջ 1.200 մարդու, ասվում էր. «Նրանք խոստովանեցին, որ ծառայել են սատանային եւ եթե հաջողեին, այնպես էին անելու, որ չորս տարվա ընթացքում ոչնչանար ողջ բերքը, եւ սովյալները տրվեին մարդակերության, առաջացնելու էին այնպիսի փոթորիկներ, որ արմատախիլ էին լինելու անտառները եւ ավերվելու էին շենքերը»:

Դատապարտյալների մեջ կային յոթ-ութ տարեկան աղջիկներ, որոնցից քսաներկուսը դատապարտվել եւ խարույկ են բարձրացվել:

Դատավարությունները կատարվում էին հապճեպ, պարզեցված կարգով, միանգամից վճիռ էր կայացվում 10-15 անձի նկատմամբ: Նույնիսկ հարկ չէին համարում հիշատակել դատապարտյալների անունները. պարզապես համարակալում էին՝ մեկ, երկու... տասը եւ այլն:

Նույնը տեղի էր ունենում Նյուրնբերգի եպիսկոպոսությունում: Այստեղ ողջակիզման դատապարտվածների մեջ կային ամբողջ ընտանիքներ, ամենագեր քաղաքացին, ամենագեղեցիկ օրիորդը, պոլիգլոտներ, բժիշկներ, աստվածաբաններ, հոգեւորականներ, կույրեր, մանկահասակներ եւ այլն:

16-րդ հարյուրամյակում «վիուկների որսը» Քյոլնի եպիսկոպոսությունում մոլեգնում էր համաճարակի պես: Գրեթե չկար ընտանիք, որ զերծ մնար այդ պատուհասից:

Առանձնապես շատ էին մահապատիժները Բոննում: Այնտեղ կրակի են մատնել պրոֆեսորների, իրավագետների, հոգեւորականների, ազնվականների: Հասարակ մարդկանց մասին խոսելն անգամ ավելորդ է: Դարձյալ մեծ թիվ են կազմել մանկահասակները: «Նախապատվությունը» տվել են տղաներին: Եվ դարձյալ խարույկ բարձրացողների թվում էր տեղի ամենագեղեցիկ օրիորդը:

Հայտնաբերվել եւ ողջակիզվել են «վիուկուսույցներ»: Այսպես, հեղինակավոր հանձնաժողովը հայտնաբերեց, որ Վիտենբերգի երեխաների մեջ սկսվել է «վիուկացավի» համաճարակ. յոթ-տասը տարեկան երեխաներին թվում էր, թե գիշերներն իրենք թռչում են ցախավելներին հեծած, մասնակցում վիուկների խնջույքների, ուր իրենց մղում են աստվածուրացության: Հանձնաժողովի անդամները հանգում են այն եզրակացության, որ այդ ամենը մի վիուկի «գործունեության» արդյունք է: Մեղադրանքը բարդվում է ջուլիակի այրի ոմն Ագնեսայի վրա: Նա կտտանքների ազդեցության տակ ընդունում է մեղքը, խոստովանում, որ հանգուցյալ ամուսնուն տեսնելու ցանկությունից մղված՝ կապ է հաստատել չար ուժերի հետ, կատարել նրանց հրահանգները, կախարդությամբ օգնել, որպեսզի նրանք մտնեն երեխաների երազների մեջ ու վիուկ դարձնեն նրանց:

Հասկանալի է, Ագնեսան արժանացավ նույն ճակատագրին, ինչ մյուս վիուկները: Նրան խարույկ բարձրացրին:

Էլզասում ինկվիզիցիայի խարույկներ սկսեցին վառվել 1570 թվականին: Տասը տարվա ընթացքում այստեղ խարույկ բարձրացավ 136 «վիուկ»:

Սակայն վերը հիշատակած փաստերը ոչինչ են Ստրասբուրգի մարզում տեղի ունեցած ահավոր սպանդի համեմատ. 15 տարվա ընթացքում (1620-1635 թթ.) այդտեղ մահապատժի ենթարկվեց շուրջ 5.000 մարդ:

Հակակարգությունը Մոսկվայում. 1919 թ.

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունը եւ բոլշեւիկյան հեղաշրջումը ապակայունացրին երկիրը: Բանտերից բոլոր կալանավորներին ազատ արձակելը ավելի սրեց իրադրությունը: Քրեական հանցագործների առաջին գործը եղավ ՆԳ նախարարության եւ ոստիկանական տարբեր տեղամասերի վրա հարձակումը, որը նպատակ ուներ ոչնչացնել արխիվները: Բացի այդ, հանցագործ տարրի ձեռքում հայտնվեց մեծ քանակությամբ զենք:

1918-1919 թթ. Մոսկվայում գործում էին երկու խոշոր ավազակախմբեր, որոնք ահ ու սարսափի մեջ էին պահում մայրաքաղաքը. «որսում էին» միլիցիոներներին, գնդակահարում փողոցներում ծառայություն կատարող իրավապահներին: Միայն 1919 թ. հունվարի 24-ին Սաբանի ու Կոշելկովի ավազակախմբերը գնդակահարեցին 36 միլիցիոների: Մոսկվայում սկսեցին լուրեր տարածվել, որ մայրաքաղաքում գործում է գաղտնի կազմակերպություն, որի նպատակն է սպանել միայն միլիցիոներներին: Ժողովուրդը նրանց անվանեց «սեւ վրիժառուներ»: Հունվարին ավազակները կատարեցին վաթսունից ավելի սպանություն: Նրանց հայտնաբերումը պատվի հարց դարձավ Մոսկվայի քրեական հետախուզության աշխատակիցների համար:

Այդ ժամանակ Մոսկվայում գործում էին մոտ երեսուն ավազակախմբեր, որոնցից մի քանիսը աչքի էին ընկնում բացառիկ դաժանությամբ: Նման խմբավորումներից մեկի ղեկավարը վեց անգամ դատված «Սաբան» մականունով Նիկոլայ Սաֆոնովն էր: Նրա քառասունհոգանոց հանցախումբը բաժանվել էր երեք խմբի՝ առաջինն իրականացնում էր հետախուզությունը, երկրորդը՝ զինված կողոպուտը, երրորդը պաշտպանում էր կողոպտիչների նահանջը: Առաջին անգամ ավազակախումբը կարողացավ ձեռք բերել 200 հազար ռուբլի, որն այն ժամանակվա համար

Օպերացիա ավազակախմբի դեմ

մեծ գումար էր: 1,5 միլիոն ռուբլի կարողացան ստանալ գործարանատեր Իվանովից՝ սպանելով նրա ողջ ընտանիքը:

Սաֆոնովը աչքի էր ընկնում հանդգնությամբ: Տեղեկանալով, որ ողջ մոսկովյան միլիցիան իրեն է փնտրում, հայտնվում է միլիցիայի քաղաքային բաժանմունքներից մեկում, կրակ է բացում եւ նռնակ նետում իրավապահների վրա ու անհետանում:

Օպերատիվ աշխատակիցները երկարատեւ հետախուզական աշխատանքներից հետո կարողանում են գտնել ավազակախմբի հետքը ու ձերբակալել Սաբանի գործընկերոջը: Սաբանը որոշում է անցնել ընդհատակ. մեկնում է Լիպեցկի մարզում բնակվող քրոջ մոտ: Կասկածելով, որ քույրը կարող է միլիցիային հայտնել իր տեղը, հաշվեհարդար է տեսնում քրոջ ու նրա ընտանիքի ութ անդամների հետ, որոնց թվում՝ երեք երեխա:

Քաղաքի բնակիչները տեղեկանալով զազրելի հանցագործության մասին՝ բաներով սպանում են Սաբանին: Հետագայում ավազակախումբը գլխավորում է ոմն Պավել Մորոզով, որը շարունակում է զինված կողոպուտները, այդ ընթացքում կատարելով երեսունից ավելի սպանություն: Մոսկվայի քրեական հետախուզության աշխատակիցները հայտնաբերում են ավազակախումբը եւ նրա բոլոր անդամներին գնդակահարում:

Մոսկվայում գործում էր մեկ այլ խոշոր ավազակախումբ, որը գլխավորում էր Յակով Կոշելկովը: Նա հայտնի դարձավ ոչ միայն միլիցիոներների վրա հարձակումներով, այլեւ 1919 թ. հունվարին Խորհրդային Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Լենինին կողոպտելով: Կանգնեցնելով ավտոմեքենան՝ ավազակները ուղեւորներից պահանջում են իջնել մեքենայից: Լենինը ներկայացնում է փաստաթղթերը: Կոշելկովը գլխի չընկնելով՝ հակադարձում է. «Գրողը քեզ տանի, հետո՞ ինչ, որ Լենինն ես, իսկ ես Կոշելկովն եմ՝ քաղաքի գիշերային տերը»: Կողոպտում է ուղեւորներին, առգրավում Լենինի «Բրաունինգ» ատրճանակը: Որպեսզի անց Յաշկան հասկանում է, թե ում է կողոպտել եւ որոշում է խորհրդային կառավարության ղեկավարին պատանդ վերցնել ու փոխանակել բանտում նստած հանցակիցների հետ: Սակայն արդեն դեպքի վայր էին ժամանել Արտակարգ հանձնաժողովի աշխատակիցները, եւ ավազակները նախընտրում են հեռանալ:

Շուտով օպերատիվ աշխատակիցները հայտնաբերում են ավազակախումբը: Ինքնաձգության ժամանակ Յաշկան սպանվում է: Նրա մոտ հայտնաբերվում են նռնակներ եւ Լենինի «Բրաունինգը»:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Կեսգիշերային սպանիչ այց

2016 թ. հունվարի 7-ին 50-ամյա Սրբուհի Ժ.-ն Զեյթունից ցանկացել է գնալ Նոր Նորքի 5-րդ զանգված: Տաքսիների վարորդներից մեկին առաջարկել է սեռական հարաբերություն ունենալու դիմաց տեղափոխել իր ցանկացած վայրը: Վերջինս մերժել է, բայց ասել է, թե ծանոթ տարեց տղամարդ կա, որը կցանկանա գումարի դիմաց կնոջ հետ հանդիպել: Գնացել են Ավան՝ 82-ամյա Բարկիֆ Յ.-ի բնակարան: Սրբուհին սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ ու, որպես վարձատրություն, ստացել է 10 հազար դրամ:

Սրբուհին պարբերաբար այցելել է տղամարդուն: Երբեմն Բարկիֆի բնակարան է տարել նաեւ 20-ամյա որդուն՝ Արշակին: Մայրը որդուն առաջարկել է Բարկիֆի տնից գողություն անել՝ հայտնելով, թե հյուրասենյակի պահարանում տղամարդը ծրարով փող է պահում:

Փետրվարի 19-ին, ժամը 23.30-ի սահմաններում, մայր ու որդի Բարկիֆի հրավերով գնացել են նրա տուն: Արշակը խոհանոցում ընթրել է, Սրբուհին բավարարել է տարեցի պահանջմունքները: Երբ Բարկիֆը մտել է լոգարան, մայրը որդուն ցույց է տվել փողի տեղը: Քիչ անց Սրբուհին տղամարդուն տարել է խոհանոց, իսկ Արշակն այդ ընթացքում բացել է պահարանը, սակայն փող չի հայտնաբերել: Նա մորը հասկացրել է այդ մասին: Նրանց խոսակցությունը կասկածներ է առաջացրել տանտիրոջ մեջ. գնացել է հյուրասենյակ՝ իրավիճակը ստուգելու: Տեսնելով, որ Բարկիֆը հասկացել է իրենց մտադրությունը, մայր ու որդի անցել են ավազակային հարձակման: Արշակը բռունցքով հարվածել է Բարկիֆին, հետո պարանոցից բռնած՝ նրան տարել է զուգարան եւ նստեցրել զուգարանակոնքին: Ըստ դատական ակտի՝ կյանքից զրկելու դիտավորությամբ Արշակը բռունցքով, նաեւ գլխով խփել է նրա գլխին: Այդ ընթացքում Սրբուհին բնակարանից հափշտակել է բջջային հեռախոս, մարգաբաճկոն, գիշերազգեստ ու գուլպա:

Արշակը ծանր վնասվածքներ ստացած տղամարդուն անօգնական թողնելով զուգարանում՝ անջատել է լույսը, փակել զուգարանի դուռը, հափշտակել է էլեկտրական ածելի, ու մոր հետ հեռացել են:

Զուգարանում անգիտակից վիճակում գտնվող Բարկիֆ Յ.-ին հայտնաբերել է նրան այցի եկած որդին: Բարկիֆը տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ մահացել է:

Տարեց տղամարդու հեռախոսային խոսակցությունների վերծանումները քննությանը կանգնեցրել են Սրբուհու հետքի վրա: Սրբուհին ու Արշակը բռնվել են:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը Արշակ Ժ.-ին դատապարտել է 12 տարի, իսկ Սրբուհի Ժ.-ին՝ 7 տարի ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱԾՅԱՆ

Սանկցիայի եւ յուրացում

Երեւանում գործող ՍՊԸ-ներից մեկի սնանկության հայտարարությունը կասկածահարույց էր: ՍՊԸ-ն հացի արտադրությամբ էր զբաղվում: Քննարկման ենթակա հարցը, սակայն, ընկերության սնանկացմանը եւ դրա պատճառներին չի վերաբերում, այլ սնանկացման մասին հայտարարելուց հետո կատարվածին:

Ընկերության առաքման կետերից մեկը խանութ էր, որն ընկերության հացամթերքը ամեն օր կանոնավոր ստանում էր: Սակայն 2016 թ. հոկտեմբերի 21-ին սնանկության մասին հայտարարելուց հետո ընկերությունը շարունակել է տվյալ խանութին նույն կանոնավորությամբ հաց մատակարարել, ասել է թե՝ արտադրությունը չի կանգնել: Խանութը հացը ստանում էր եւ անմիջապես վճարում: Առաքիչն էլ փողը փոխանցում էր ընկերության տնօրենին:

Տնօրենը, պարզվում է, ստացած փողը ոչ թե դրամարկղ, այլ իր գրպան էր մուտքագրել: Մինչդեռ ընկերությունը պարտքեր ուներ, որոնք մարելու համար վճարունակ չլինելու պատճառով էր սնանկ հայտարարվել: Ուստի պատահական չէր, որ սնանկացման գործով կառավարիչը խանութի տիրոջը գումարային պահանջ ներկայացրեց, ըստ որի՝ խանութը 440 հազար դրամի պարտք ուներ թե՛ սնանկացման մասին հայտարարելուց առաջ, թե՛ հետո մատակարարված հացի դիմաց: Սա խանութի սեփականատիրոջ համար ոչ միայն անսպասելի էր, այլեւ վրդովեցուցիչ, եւ նա դիմեց ոստիկանության Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունք:

Քրեական գործ է հարուցվել:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Համաներմամբ ազատվածը

Մայրաքաղաքի Նաիրի Զարյան փողոցի 3-րդ շենքի բնակիչներից մեկը փետրվարի 14-ի վաղ առավոտյան տնից դուրս էր եկել ու ժամը 23-ին վերադառնալով՝ բնակարանը թալանված տեսել: Ահազանգել էր ոստիկանություն: Հափշտակվել էին զարդեր ու այփադ:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց միացան նաեւ Երեւան քաղաքի վարչության եւ Էրեբունու բաժնի քրեական հետախույզները:

Էրեբունու ոստիկաններն օպերատիվ աշխատանքի արդյունքում պարզեցին բնակարանային գողությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը եւ գտնվելու վայրը: Հաջորդ քայլը ձեռք բերած տվյալներն անթերի իրացնելն էր: Փետրվարի 16-ին կասկածյալը Աբովյան փողոցում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Էրեբունու բաժին:

Նախկինում գողության մեղադրանքով դատապարտված եւ համաներմամբ վերջերս ազատ արձակված Նարեկ Սարգսյանը բերման ենթարկվելուց հետո խուզարկվեց: Հայտնաբերվեցին հափշտակված զարդերը, իսկ հետագա միջոցառումներով՝ նաեւ այփադը, որը վաճառել էր:

Երեւանի բնակիչ, 22-ամյա Նարեկ Սարգսյանը կալանավորվել է:

Գազաբալոններ գողացողները

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները Աջափնյակ վարչական շրջանում ձեռնարկած միջոցառումներով անձնական ունեցվածքի գողության վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ էին ստացել: Ըստ տեղեկությունների՝ «Օպել» մակնիշի մեքենայի վարորդն ու նրա ուղեւորները գողացել են Տիչինայի փողոցում կայանված մեքենաներից մեկի գազաբալոնը: Դեպքը տեղի էր ունեցել փետրվարի լույս 21-ի գիշերը:

Հանցագործության մասին տեղեկությունն իրացնելով՝ քրեական հետախույզները հայտնաբերել էին տեսադաշտում հայտնված «Օպել»-ը: Վարորդը մեքենայով դիմել էր փախուստի, ոստիկանները հետապնդել էին: Այդ ընթացքում «Օպել»-ի վարորդը չէր կարողացել կառավարել մեքենան. բախվել էր բետոնե արգելապատնեշին ու կանգնել: 39-ամյա վարորդ Անդրանիկ Օդաբաշխյանը, ուղեւորները՝ 31-ամյա Կիմ Գեւորգյանն ու 39-ամյա Գնել Սարգսյանը, բերման էին ենթարկվել ոստիկանության Մաշտոցի բաժին:

Բաժնի պահպանվող հատուկ տարածք տեղափոխված «Օպել»-ի խուզարկությամբ հայտնաբերվեց գողացված գազաբալոնը: Բերման ենթարկվածները խոստովանեցին, որ գողություն են արել՝ խոստովանելով, որ բացի նշված դեպքից՝ գազաբալոններ են գողացել մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում կայանված մի քանի մեքենայից:

Պարզվեց, որ Գնել Սարգսյանը նախորդ տարվա օգոստոսից ոստիկանության Վաղարշապատի բաժնի կողմից հետախուզվում էր բնակարանային գողության մեղադրանքով:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Միջադեպ գիշերային ակումբում

Ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները փետրվարի 13-ին բաժին են հրավիրել մի քաղաքացուհու, որը հաղորդում է փվել, որ փետրվարի 12-ին գիշերային ակումբի առանձնասենյակներից մեկում ոմն Ջոն ժետոններ է նետել իր վրա եւ հայհոյել, իսկ երբ ինքը փորձել է սենյակից դուրս գալ, ափրճանակով կրակել եւ գարեջրի շիշ է նետել իր ուղղությամբ, ինչից հետո ինքը փախել է: Տղամարդը հայհոյելով՝ փնտրել է իրեն. ի վերջո, նրան հեռացրել են ակումբից:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվեց, որ Ջոնը Վանաձորի բնակիչ Ջանիբեկ Մ.-ն է: Նա ոստիկանների բացատրական աշխատանքների շնորհիվ ներկայացավ ոստիկանության Գուգարքի բաժին՝ ներկայացնելով պնեւմատիկ ատրճանակը:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Թմրամոլը բերման ենթարկվեց

Ոստիկանությունը շարունակում է թմրանյութերի օգտագործման եւ անօրինական շրջանառության դեմ հետեւողական պայքարը: Հերթական դեպքը ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները բացահայտեցին:

Օպերատիվ տեղեկություններն իրացնելով՝ ոստիկանները Արագածավան-Արմավիր ճանապարհից, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ոստիկանության Թալինի բաժին բերման ենթարկեցին Գյումրիի բնակիչ Աշոտ Գաբրիելյանին:

Անձնական խուզարկությամբ նրա բաճկոնի գրպանից հայտնաբերվեց պոլիէթիլենային տոպրակներով շագանակագույն, յուրահատուկ հոտով զանգված եւ նույն զանգվածով ապակե գլանակ:

Գաբրիելյանը խոստովանեց, որ հայտնաբերվածը թմրանյութ է, պահում է իր օգտագործման համար:

Կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Բացահայտում են Վանաձորի ոստիկանները

Փետրվարի 11-ից 12-ը Վանաձորի Աղյուսագործների փողոցի մի տնից գողություն էր կատարվել: Օգտվելով տանտերերի արտասահմանում գտնվելու հանգամանքից՝ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին երկրորդ հարկի պատշգամբի դուռը, տունը տակնուվրա անելուց հետո հափշտակել էին կենցաղային թանկարժեք իրեր, անկողնային պարագաներ:

Փետրվարի 12-ի առավոտյան հարեւանուհին, որի պահպանությանն էր հանձնված տունը, տեսնելով, որ գողություն է կատարվել, ոստիկանություն էր զանգել:

Ահազանգը ստանալուն պես արագ էին գործել նաեւ ոստիկանության Լոռու մարզային վարչության եւ Բազումի բաժնի ծառայողները: Ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ բնակարանային գողությունը հնարավոր է կատարած լինեն Վանաձորի բնակիչ Հարութ Ալեքսանյանը եւ Արջուտ գյուղի բնակիչ Ֆրունզե Ալոյանը:

Հաղորդումից ժամեր անց երկուսն էլ բերման ենթարկվեցին ոստիկանության Բազումի բաժին:

Պարզվեց, որ գողոնի մի մասը կասկածյալները թաքցրել էին իրենց տներում, մյուս մասը՝ վաճառել:

Հարուցվել է քրեական գործ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Խաղամոլության զոհերը

Խաղամոլությունը հին երեւույթ է: Մոլեխաղերն առաջացել են դեռեւս Հին Եգիպտոսում՝ մեր թվարկությունից առաջ: Հին Եգիպտոսում խաղում էին զառերով, իսկ, օրինակ, Չինաստանում՝ խաղաթղթերով: Ընդ որում, խաղալը վատ արարք չէր համարվում, ինչպես, ասենք, Խորհրդային Միությունում էր: Խորհրդային տարիներին խաղամոլությունը քրեականացված էր. մոլեխաղերին նպաստելը, դրանց համար որջեր պահելը, անչափահասներին մոլեխաղերի մեջ ներգրավելը համարվում էին հանցագործություն եւ դասվում քրեական օրենսգրքի՝ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շարքին:

Քսանմեկերորդ դարում խաղամոլությունը դարձել է մարդկության առջեւ ծառացած խնդիր, չարիք: Երեւույթը գովազդելու մեջ, թերեւս, դերակատարում ունեն նաեւ ֆիլմերում կամ գովազդային տեսահոլովակներում ներկայացվող տեսարանները. ներկայացվում է մի երեւակայական աշխարհ, որտեղ հեշտությամբ խոշոր գումար են շահում: Հաջողակ մարդկանց քարոզչությունը հոգեբանական ազդեցություն է ունենում մարդկանց վրա, եւ նրանք աստիճանաբար ընկղմվում են խաղի մեջ, դառնում խաղամոլ:

Խաղամոլությունը հաճախ մղում է հանցավոր արարքների: Սա երեւույթի վտանգավոր կողմն է: Խաղամոլները պարտք են վերցնում, խաղում, տանուլ տալիս ու տանուլ տվածը հետ բերելու համար նորից խաղում... Ու այդպես, ճնագնդի նման գլորվելով, իսկայական պարտք է գոյանում, որը մարելու ճանապարհը կա՛մ հանցագործություն կատարելն է, կա՛մ ինքնասպանությունը...

Վերջին օրերին կատարված երկու դեպքերը ասվածի վկայությունն են: Այդ օրինակները պետք է որ դաս լինեն խաղամոլության ճիրաններում հայտնվածների համար: Եվ՝ ոչ միայն նրանց համար: Խաղամոլությունը չարիք է: Ու չպետք է մոռանալ մի պարզ ճշմարտություն. ոչ մի խաղատուն չի պարտվում, պարտվողը միշտ էլ խաղացողն է՝ խաղամոլը:

Փետրվարի 16-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին, ներկայանալով մայրաքաղաքի Լենինգրադյան փողոցի անասնակերերի մասնագիտացված խանութի վաճառող, հայտնում էր, որ հարձակվել են իր վրա եւ հափշտակել դրամարկղում եղած գումարը:

Ահազանգով անմիջապես դեպքի վայր մեկնեցին ոստիկանության Երեւան քաղաքի, Մալաթիայի բաժնի եւ վարչական շրջանի քննչական բաժնի օպերատիվ խմբերը: Ավազակային հարձակման ենթարկված վաճառողը՝ Սպարտակ Մաթեւոսյանը, հայտնեց, որ ժամը 12-ի սահմաններում երկու անհայտ անձինք, առեւտուր անելու պատրվակով, մտել են խանութ եւ, պարանը փաթաթելով իր պարանոցին, սպառնալիքով հափշտակել են խանութում եղած ողջ գումարը՝ 740 հազար դրամ:

Դեպքի վայրի զննությամբ՝ փորձաքրեագետները որեւէ հանցանշան չհայտնաբերեցին, չկային նաեւ ականատես վկաներ: Առաջ քաշված վարկածներից մեկն էլ ավազակային հարձակման կեղծակերպումն էր:

Ձեռնարկված միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում Սպարտակ Մաթեւոսյանը խոստովանեց: Ոչ մի հանցագործություն էլ տեղի չէր ունեցել, տպավորություն ստեղծելու համար ինքն էր իր պարանոցին լարով հետքեր թողել:

Երիտասարդը խանութի փողերով բուքմեյքերական գրասենյակում խաղադրույք էր արել, տարվել ու տանուլ տվածը խանութի փողերով փակել: Իսկ արարքը կոծկելու համար ավազակային հարձակում էր բեմականացրել:

Հանցագործության կեղծակերպման հաջորդ սցենարը Շիրակի մարզի 34-ամյա մի բնակիչ է բեմականացրել: Հունվարի 6-ին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն գողության վերաբերյալ ահազանգողն էլ ինքն էր: Հայտնում էր, որ իրենց բացակայության օրերին՝ հունվարի 4-6-ը, տնից գողացել են յոթ հարյուր հազար դրամ արժողությամբ ոսկյա զարդեր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքը երկու շաբաթ անց էր: Հաստատվեց քրեական հետախույզների վարկածը՝ ոչ մի գողություն էլ չէր եղել, խաղատանը տանուլ տված տանտերը զարդերը գրավադրել եւ մարել էր պարտքը...

Փետրվարի 17-ի լուսադեմին ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Հրազդանի բաժին հաղորդում ստացվեց, որ իրենց զանգած կինը հայտնել է, որ Ծաղկաձորի խաղատներից մեկում ինչ-որ պաշտոնյաների թիկնապահներ մարդկանց պատանդ են վերցնում, դանակով սպառնում, խլում են փողերը: Այնուհետեւ զանգել է անհայտ քաղաքացի եւ հայտնել, որ խաղատանն ուզում են զենքով խփել իրեն:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ զանգողներն ամուսիններ են՝ Ծաղկաձորի բնակիչներ: Պարզվել է նաեւ, որ ամուսինը՝ Արա Մ.-ն, կնոջն իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ է հայտնել՝ փորձելով թաքցնել խաղատանը փողերը տանուլ տալու հանգամանքը:

Արա Մ.-ն խոստովանել է, որ ոստիկանություն հաղորդումը մտացածին է:

Բոլոր դեպքերով նյութեր են նախապատրաստվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ավտոգողություններ

Փետրվարի 9-ի գիշերը ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնեց, որ կոտրել են շենքի բակում կայանված իր մեքենայի ապակիները եւ փորձել գողություն անել, սակայն չկարողանալով բացել դռները՝ հեռացել են:

Իսկ առավոտյան ոստիկանություն զանգած մեկ այլ քաղաքացի հայտնեց, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ շարժիչի կափարիչը բացելով՝ գողացել են շենքի բակում կայանված իր մեքենայի էլեկտրական մարտկոցը եւ ինդուկցիոն կոճը, իսկ դռան ապակին կոտրելով՝ սրահից գողացել են փող:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, փետրվարի 11-ին, գողություն եւ գողության փորձ կատարելու կասկածանքով, ոստիկանություն բերման ենթարկեցին 46-ամյա Կարեն Մ.-ին: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Փետրվարի 13-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, որ իրենց տան դիմաց կայանած իր «ՎԱԶ-2107» մեքենան փախցրել են:

Ոստիկանության Մաշտոցի բաժնի օպերատիվ խմբի հետ բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Ապարանի բաժնի ծառայողների եւ ՊՊԳՎ Ապարանի պահպանության բաժանմունքի ծառայողները:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, մեքենան փախցնելու կասկածանքով, Ջրամբար գյուղից ոստիկանություն բերման ենթարկվեց երեւանցի, վերջերս համաներմամբ ազատ արձակված Արամայիս Մ.-ն՝ «ՎԱԶ-2107» մեքենայով:

Պարզվել է նաեւ, որ Արամայիս Մ.-ն մեքենան փախցրել է Նարեկ Մ.-ի եւ Արթուր Մ.-ի հետ:

Երկու դեպքով էլ կատարվում է քննություն:

«Հեռախոսային» կրքեր

Հունվարի 21-ին ոստիկանության Էրեբունու բաժնում գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Տեխնիկական միջոցների գործադրմամբ կոտրել էին Սասունցի Դավթի արձանի հարակից բջջային հեռախոսների եւ աքսեսուարների խանութի դռան կողպեքն ու գողացել մեկ միլիոն դրամի ապրանք:

Դեպքի առթիվ նյութեր նախապատրաստվեցին:

Բջջային հեռախոսների առուվաճառքով զբաղվող խանութից գողության վերաբերյալ Էրեբունու ոստիկանությունում ստացված հերթական ահազանգը փետրվարի 10-ին էր: Կոտրել էին Տիտոգրադյան փողոցի խանութի մուտքի եվրոդռան ապակին, մտել ու գողացել նոթբուք, հեռախոսի պարագաներ, լիցքավորման քարտեր ու փող:

Դեպքերի ուսումնասիրությամբ վարկած առաջ քաշվեց, որ երկու գողությունն արել է նույն անձը կամ անձինք:

Համագործակցելով ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողների հետ՝ Էրեբունու քրեական հետախույզներն օպերատիվ տեղեկություններ ստացան, որ երկու գողությունն էլ կատարել է Աբովյան քաղաքի բնակիչ Կորյուն Մխիթարյանը: Բացատրական աշխատանքների արդյունքում նա ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին եւ խոստովանական բացատրություն տվեց:

Խանութներից մեկի տարածքը տեսահսկող սարքերի տեսագրության վերծանմամբ պարզվեց, որ Մխիթարյանը մենակ չէր գործել, բայց յուրաքանչյուր դեպքում մասնակիցները տարբեր էին:

Ոստիկանները պարզել են գողություններին մասնակից մյուս անձանց ինքնությունը: Ձեռնարկվում են միջոցառումներ նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

Գողոնի մի մասը Մխիթարյանը հասցրել էր վաճառել, մյուս մասը ներկայացրեց քրեական գործի նախաքննությունն իրականացնող մարմնին:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Գողությունները բացահայտվեցին



Փետրվարի 5-ին «Վերնիսաժում» գողություն էր կատարվել: Մի տղամարդ տաղավարից արծաթե մատանի էր հափշտակել: Ոստիկանության Կենտրոնական բաժնում կատարվածի վերաբերյալ ահազանգ չէր ստացվել: Բաժնի քրեական հետախույզներն օպերատիվ ճանապարհով էին տեղեկացել կատարվածի մասին: Նույն օպերատիվությամբ էլ հայտնաբերեցին գողությունը կատարելու մեջ կասկածվող տղամարդուն:

Գյումրիի բնակիչ Արտաշես Մանուկյանը մայրաքաղաքի Բուզանդի փողոցից բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին, որտեղ խոստովանական բացատրություն տվեց:

Պարզվեց, որ նա փետրվարի 4-ին Հյուսիսային պողոտայի սրճարանից գողացել էր բջջային հեռախոս: Նույն օրը բջջային հեռախոսներ էր հափշտակել նաեւ Հայաստանի ագրարային համալսարանի 9-րդ մասնաշենքում:

Արտաշես Մանուկյանը ոստիկանությունում հայտնել է նաեւ, որ Կենտրոն վարչական շրջանում մեկ տասնյակից ավելի գողություններ է արել:

Տաստով քննություն է կատարվում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Համաներմամբ ազատ էր արձակվել

Փետրվարի 9-ից 10-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը կոտրել էր Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի տներից մեկի պատուհանը, մտել ներս եւ գողացել ոսկյա ականջօղեր, բջջային հեռախոս ու 13 հազար ռուբլի:

Փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի վերջերս համաներմամբ ազատ արձակված, Փոքր Վեդի գյուղի բնակիչ Հակոբ Ալթունյանը:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արարատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց կասկածյալի գտնվելու վայրը:

Փետրվարի 11-ին Հակոբ Ալթունյանը, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Արարատի բաժին, որտեղ խոստովանական բացատրություն տվեց:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Չինվորական կոչում · Նոյյան ... · Հայ կալվածատեր / Շախմատի խաղաքար · Երկնային մարմին / ... Արմսթրոնգ · Հողմ / Կատմանդու · Իվան ... / «...ը թանկ է» · Հնում թեթեւ հեծելազոր · Գիյոմ ... · Կխտար · Կոմիսար Մեգրե / Դո, ռե · «Վայր ընկնող աստղ» · ... Բաբա / Իսպան. թագավոր · Ֆրանս. հին դրամ / Հայկ. պանիր · Մելան · ... -Դոս / Կոլտ, Բրաունինգ · Քաղաք, Ֆրանսիա · Ամոնիակ / Քահանա · Հույն բանաստեղծ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ալեն ... / Նոտագր. նշան · Վահան ... / Ֆրանս. ֆիզիկոս · Հայոց Բագրատունի արքա · Շտեմարան · Միամյա բույս · Նացիզմ / Նախնադարի պաշտամունք · Կենդանաշրջան / Լվացարանի մաս · Փոքր Մհերի կինը · 14 տող / Հականիշ · Արթուր ... Դոյլ · Եգիպտ. աստված · Քաթար / Բյուզանդ. հայազգի կայսրեր · Շինանյութ · Մակույկ · Բանող անասուն · Թակարդի տեսակ · Գրիգոր ... / Ռուսական ֆուտ. թիմ · Խաղողի, թթի եփած հյութ · Հնդկ. ցեղ, Կանադա / Առեւտրի կետ · Դանակ սրելու քար · ... տարի · «... Բուլբա» · Պտուտակաձեւ գամ / Ազգություն, Ասիա · ... Սալվադոր / Հռենոսի վտակ · Մեխ / Հանքանյութ · ... Կուրդինյան · Փոստատար / ... Դեյք · Ուրարտ. աստված / Ռուս մեխանիկ · Գենադի ... / Ծանրութ. հին չափ · «Ազատ հրաձիգը», օպերա · Գերման. ֆիզիկոս / Արեւադարձ. բույս · Ռուս զորավար / Գետ, ՌԴ · Գավառ Մեծ Հայք / Գետ, Գերմանիա · Պաոլո ... (ֆուտբ.) · Հաստ մահակ / Լուսատու սարք · Պայծառության միավոր · Միջատ / Արորի կոթ · Մայր ... / Համեմ, կոտեմ · Կրտսեր / Տարվա եղանակ · ... Գասպարյան / Մածուն · ... Շիրակ · Բեյրութ / Ինքնաթիռ · Կրծող կենդանի · Օրենքը հսկող աստվածուհի · Փայտե թակիչ / Իտալ. քանդակագործ · ... Նյուտոն · Թանկ. քար / Ջրային թռչուն · Չի լինում առանց կրակի · «... գնաց մենակ» / «...ն ու ծառան» · Մետաղ / Ռեգբի, վոլեյբոլ · Հայ հաս. եւ քաղ. գործիչ, 19-րդ դար

Ստդագուշակ

Խոյ - Խորհուրդ է տրվում պատրաստ լինելու դիմակայել խոչընդոտներին:

Ցուլ - Իրադարձությունները կարող են լարվածություն առաջացնել: Համառություն մի՛ դրսեւորեք:

Երկվորյակ - Կբախվեք նախաձեռնությունների բացասական կամ կասկածելի կողմի հետ:

Խեցգետին - Օգնության կհասնի շրջահայացությունը, ինքնապահպանման բնազդը:

Առյուծ - Ժամանակին կանգ առեք, եթե ինչ-որ բան այնպես չէ: Արդյունավետ է շաբաթա առաջին կեսը:

Կույս - Շներքաշվեք ձեր արժանիքները նսեմացնող եւ թերություններն ընդգծող սցենարների մեջ:

Կշեռք - Դրսեւորեք զգուշավորություն: Չարժե հրաժարվել ձեր իրավունքներից եւ լիազորություններից:

Կարիճ - Ձեզ պետք կգա ինքնատիրապետումը, խելամտությունը, ուշադրությունը: Կանոնների վատ իմացությունը չի ազատում պատասխանատվությունից:

Աղեղնավոր - Հավասարակշռություն պահպանեք ցանկացած իրավիճակում: Եթե անհրաժեշտ ամեն ինչ արել եք, ցանկալի է կանգ առնել:

Այծեղջյուր - Ձերծ մնացեք ավելորդ ջանադրությունից, համառությունից: Բացառեք ցանկացած նախաձեռնություն:

Ջրհոս - Չի խանգարի կազմակերպվածությունը, կարգապահությունը: Պարտադիր չէ ենթարկվել ստանդարտ կանոններին:

Ձուկ - Հրաժարվեք կասկածելի միջոցառումներից: Չարժե փորձել ճակատագիրը՝ ջանալով հաղթահարել լուրջ արգելքը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.a1-c3 e7:b4 2.c3:f2x

Խնդիր N2 1.e3-d4 c3:e5 2.g3-h4 a5:c3 3.h4:b2x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 28.02.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: